ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 782 - Ա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ
ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ հոդվածի 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի տնօրինության 29,950,000 ՀՀ դրամ սկզբնական արժեքով 2 միավոր տրանսպորտային միջոցները հետ վերցնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Կոմիտեի տնօրինության՝ 33,414,530 ՀՀ դրամ սկզբնական արժեքով 3 միավոր տրանսպորտային միջոցները հետ վերցնել կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո

եռամյա ժամկետում իրականացնել սույն որոշման NN 1 և 2 հավելվածներում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքները՝ գրանցման և հաշվառման ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

20.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ